ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. մայիսի 04-ից 06-ը Իսպանիայի Թագավորություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Անի Իսպիրյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Իսպանիայի Թագավորություն (ք. Բարսելոնա), 2022թ. մայիսի 04-ից 06-ը

4. Հրավիրող կողմը՝

ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

ՄԱԿ ԵՏՀ «Պետություն-մասնավոր գործընկերություն» խորագրով աշխատանքային խմբի 6-րդ նստաշրջանին մասնակցություն

6. Քննարկված թեմաները՝

Մարդակենտրոն ՊՄԳ-ն՝ որպես կայուն զարգացման նպատակին հասնելու միջոց:

Կոնցեսիոն կայուն պայմանագրերի առանձնահատկությունները:

ՄԱԿ ԵՏՀ գնահատման մեթոդաբանությունը և դրա բնապահպանական, սոցիալական և կառավարչական սկզբունքները, որպես ՊՄԳ գործընթացում մասնավոր կապիտալի ներգրավման գործիք:

Մարդակենտրոն ՊՄԳ-ի աջակցությունը շրջանաձև տնտեսությանը:

Տարածաշրջանային տնտեսական զարգացում ՊՄԳ միջոցով, ենթակառուցվածքային ծրագրերում հանրային սեփականության առավելագույն օգտագործումը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՄԱԿ ԵՏՀ Համագործակցություն և գործընկերություն վարչության Տնտեսական համագործակցության և առևտրի բաժնի ղեկավար Տ. Բոնիչիի հետ: Քննարկվել են խորհրդատվական և օրենսդրական կարգավորման ոլորտում համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

Բարսելոնա քաղաքի հասարակական տրանսպորտի օպերատոր՝ TRAM ընկերություն այցելության շրջանակներում քննարկվել է տրանսպորտային ցանցի ստեղծումն ու շահագործումը, ինչպես նաև տրանսպորտի զարգացման գործընթացում ՊՄԳ ներդրման դերն ու հնարավորությունները:

Միջոցառման ընթացքում մասնակիցներին է ներկայացվել ՀՀ-ում ՊՄԳ և հանրային ներդրումների կարգավորման իրավական ակտերը, վերջիններիս հիմնական թեզերը, զարգացման ուղղությունները:

Միջոցառման հատուկ նիստի ընթացքում մասնակիցներին ներկայացվել է «Շիրակ Դրայ Պորտ (Shirak Dry Port)» հատուկ տնտեսական գոտի» ներդրումային ծրագրի նախագիծը: Նախագծով նախատեսվում է Շիրակի մարզում խոշոր լոգիստիկ հանգույցի ստեղծում, որը փոխկապակցված է լինելու Հյուսիս-հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՄԱԿ ԵՏՀ Համագործակցություն և գործընկերություն վարչության Տնտեսական համագործակցության և առևտրի բաժնի ղեկավար Տ. Բոնիչիի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ՊՄԳ զարգացման նպատակով ք. Երևանում թեմատիկ միջոցառում կազմակերպելու աշխատանքները սկսելու վերաբերյալ:

ՄՖԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՊՄԳ պատասխանատու Մ. Սիլայի և ՎԶԵԲ ավագ խորհրդատու Ա. Զվերևի հետ է ձեռք բերվել պայմանավորվածություն համագործակցության

վերաբերյալ, որի նպատակն է լինելու կատարելագործել ՊՄԳ և հանրային ներդրումների իրավական կարգավորումներն ու գործիքակազմը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

10.05.2022